ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 25 » հունվար 2023թ. No 301 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N 1498-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 04/215-23 առ 23.01.2023թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2022 թվականի ապրիլի 12-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N 1498-Ա հրամանի հավելվածի Կլարիսկան 0,5մմոլ/մլ լուծույթ ներարկման 10մլ (ԳՀ 20610), 15մլ (ԳՀ 20611), 20մլ (ԳՀ 20612), 50մլ (ԳՀ 20613) և 100մլ (ԳՀ 20615) դեղերի «Փաթեթավորումը, թողարկման ձևը» կետերի «10մլ ապակե սրվակ, 15մլ ապակե սրվակ, 20մլ ապակե սրվակ, 50մլ պլաստիկե շշիկ և 100մլ պլաստիկե շշիկ» բառերը փոխարինել համապատասխանաբար «10-ական ապակե սրվակներ 10մլ, 10-ական ապակե սրվակներ 15մլ, 10-ական ապակե սրվակներ 20մլ, 10-ական պլաստիկե շշիկներ 50մլ և 10-ական պլաստիկե շշիկներ 100մլ» բառերով,

Ընդունել թվով 1 հրամանում փոփոխությունները:

4.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի, բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին:

5.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Ա.Բաղրյանին՝

1) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, լիազոր մարմնի հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը:

6.Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել նշված դեղերի վերաձևակերպված հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Invalid signature

X 

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164